ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Ամեն՝ Նպատակասլաց կյանք ունենալով

Մաս 1

«Արդարի գլխին օրհնություններ կան...» Առակներ 10:6

ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Է ՆՊԱՏԱԿԱՍԼԱՑ ԿՅԱՆՔ ՈՒՆԵՆԱԼ

1. Աստվածային նպատակները ինձ հույս են տալիս:

«Ես ուժ չունեմ դիմանալու: Ես նպատակ չունեմ, որն ինձ կքաջալերի շարունակելու:» Հոբ 6:11

2. Աստվածային նպատակները կենտրոնացնում են իմ ուժերը:

«Ես այդպե՛ս եմ վազում, ոչ թե աննպատակ: Այդպե՛ս եմ մրցում, ոչ թե օդը ծեծելով:» Ա Կորնթացիներին 9:26

3. Աստվածային նպատակները աճեցնում են իմ հավատքը:

«Թող ըստ ձեր հավատի լինի ձեզ:» Մատթեոս 9:29

«Առանց հավատի անկարելի է Աստծուն հաճո լինել:» Եբրայեցիներին 11:6

«Ամեն բան, որ հավատից չէ, մեղք է:» Հռոմեացիներին 14:23

4. Աստվածային նպատակները կերտում են իմ բնութագիրը:

«Բարություն փնտրողը <u>բարեհաճություն է որոնում</u>, իսկ չարություն ցանկացողը կհանդիպի նրան:» Առակներ 11:27

«Անիրավի ճանապարհը Տիրոջ համար զզվելի է, բայց <u>արդարությանը հետևողին</u> նա սիրում է:» Առակներ 15:9

Ի՞ՆՉՆ Է ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԴԱՐՁՆՈՒՄ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ

1. Երբ դրանք հենված են ինձ համար Աստծո ունեցած նպատակների վրա:

Պողոս: *«Ուրեմն ես այդպե՛ս եմ վազում, ոչ թե աննպատակ:»* Ա Կորնթացիներին 9:26

Հիսուս: *«... "Հոր մոտ եմ գնում", որովհետև իմ Հայրն ավելի մեծ է, քան ես:»* Հովհաննես 14:28

«Մեր նպատակն է մնալ մեզ համար Աստծո ունեցած ծրագրի սահմաններում:» Բ Կորնթացիներին 10:13

Պողոս: *«Արդ աղաչում եմ ձեզ ես՝ Տիրոջ համար բանտարկյալս, որ այնպես ընթանաք, ինչպես վայել է այն կոչմանը, որի մեջ կանչվել եք.»* Եփեսացիներին 4:1

2. Երբ դրանք նպատակաուղղված են Աստծո համար փառք բերելուն:

«Ուստեք թե խմեք, ինչ գործ էլ որ անեք, ամեն բան Աստծու փառքի համար արեք:» Ա Կորնթացիներին 10:31

3. Երբ դրանց շարժառիթը սերն է:

«Թող սերը լինի ձեր բարձրագույն նպատակը:» Ա Կորնթացիս 14:1

«Եվ ամեն ինչն էլ վնաս եմ համարում իմ Տեր Հիսուս Քրիստոսին գերազանց ճանաչելու համեմատ: Նրա համար զրկվեցի ամեն ինչից, որ աղբ եմ համարում, ... որպեսզի ճանաչեմ նրան և նրա հարության զորությունը, մասնակից լինեմ նրա չարչարանքին, կերպարանակից՝ նրա մահվանը, որպեսզի մեռելներից հարություն առնելուն հասնեմ:» Փիլիպպեցիներին 3:8-11

«Աստծուն ոչ ոք երբևիցե չի տեսել. եթե միմյանց սիրենք, Աստված մեր մեջ կմնա, ու նրա սերը մեր մեջ կատարյալ է:» Ա Հովհաննես 4:12

4. Երբ դրանց հասնում ես Աստծո ուժի զորությամբ:

«Այդքան անմի՞տ եք. հոգով սկսեցիք ու հիմա մարմնո՞վ եք ավարտում:» Գաղատացիս 3:3

«Մարդու միտքն է խորհում նրա ճանապարհը, բայց նրա քայլերը Տերն է ուղղորդում:» Առակներ 16:9

«Դուք, որ վաղվա օրը չգիտեք, ... պետք է ասեիք. Եթե Տերը կամենա, ու ապրենք, այս կամ այն բանը կանենք:» Հակոբոս 4:15

«Ոչ թե զորությամբ և ոչ էլ ուժով, այլ իմ հոգով,- ասում է Զորքերի Տերը:» Զաքարիա 4:6

«Քո ամբողջ սրտով ապավինի՛ր Տիրոջը և քո ըմբռնողությանը մի՛ ապավինիր: Քո բոլոր ճանապարհներին ճանաչի՛ր նրան, և նա կուղղի քո ճանապարհները:» Առակներ 3:5-6

Հաջորդ Քարոզի Թեման

ԻՆՉՊԵ՞Ս ՃԻՇՏ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԺԱՄԱՆԿԸ

Հովիվ Սարո Խաչիկեան